

	Ամունդի-Ակբայի Պատասխանատու Ներդրումների քաղաքականություն	Էջ՝ 1/9 POL-0018-00
		Ստեղծված՝ 02.02.2024
		Թարմացված՝ Խորհրդի հաստատում՝ 09.02.2024

Նպատակ	Հայաստանում իրավիճակին համահունչ՝ Ամունդի-Ակբան բոլոր հնարավոր դեպքերում հավատարիմ է կայուն ներդրումների խթանմանը:
Կարգավորման և ընթացակարգային դաշտ	Ամունդիի ՊՆ քաղաքականություն
Ընդհանուր կանոն	Փաստաթուղթը մանրամասն նկարագրում է, թե ինչպես է Ամունդի-Ակբան իրականացնում իր հանձնառությունը՝ գործելու որպես ակտիվների պատասխանատու կառավարիչ իր ներդրումներում և գործառնություններում:
Շրջանակ	Եթե փաստաթղթերի համապատասխան բաժիններում այլ բան նախատեսված չէ, ապա այստեղ նկարագրված պարտավորությունները և գործընթացները կիրառվում են Ամունդի-Ակբայի կողմից և անունից կառավարվող բոլոր ակտիվների նկատմամբ: Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթը Հայաստանում երեք կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ է, որն օգտվում է ֆոնդների կառավարման գործունեության հարցում Ամունդիի առաջադեմ գիտելիքներից, փորձից և տեխնիկական աջակցությունից: Յուրաքանչյուր ֆոնդ ունի տեղական և արտասահմանյան պորտֆել: Արտասահմանյան պորտֆելի կառավարումը պատվիրակված է Ամունդի Փարիզի Պարվիրակված Ներդրումային լուծումների տնօրեն (հայերեն՝ ՊՆԼՏ, անգլերեն՝ OCIO) թիմին, իսկ տեղական մասը կառավարվում է տեղական ներդրումային թիմի կողմից:
Դերակատարներ	Ամունդի-Ակբայի գործադիր ղեկավարություն, ֆոնդի կառավարիչներ, Ռիսկերի պատասխանատու, Համապատասխանության պատասխանատու:
Լեզուներ	Հայերեն

	Ամունդի-Ակբայի Պատասխանատու Ներդրումների քաղաքականություն	Էջ՝ 2/9 POL-0018-00
		Ստեղծված՝ 02.02.2024
		Թարմացված՝ Խորհրդի հաստատում՝ 09.02.2024

Բովանդակություն

Ամունդի-Ակբա-ի պատասխանատու նպատակներ.....	3
Ռեսուրսներ և կառավարում	3
Ամունդի-Ակբա-ի ռեսուրսներ և կառավարում.....	3
Ամունդի-Ակբա-ի ռեսուրսներ և կառավարում.....	4
ԲՍԿ վերլուծություն և ինտեգրում	5
ԲՍԿ վերլուծություն.....	5
Մեր վերլուծության մեջ ու ներդրումային գործընթացներում ԲՍԿ ներառումը	5
Նվազագույն չափանիշները և բացառության քաղաքականությունը	7
Ներգրավման քաղաքականություն.....	8

	Ամունդի-Ակբայի Պատասխանատու Ներդրումների քաղաքականություն	Էջ՝ 3/9 POL-0018-00
		Ստեղծված՝ 02.02.2024
		Թարմացված՝ Խորհրդի հաստատում՝ 09.02.2024

Ամունդի-Ակբայի պատասխանատու նպատակներ

Հայաստանը մեկնարկել է Կայուն ֆինանսավորման ճանապարհային քարտեզի մշակումը՝ ներառական և բազմաթիվ շահակիրների մասնակցությամբ գործընթացի միջոցով: Այս ազգային ճանապարհային քարտեզը¹ ծառայում է որպես կլիմայի և կայուն զարգացման նպատակների իրագործման հարցում Հայաստանի գործողությունները խթանող կամ արագացնող երկարաժամկետ ռազմավարությունը սահմանող փաստաթուղթ՝ միաժամանակ բարձրացնելով ֆինանսական հատվածի մրցունակությունն ու տնտեսական դիմակայունությունը: Այն հատուկ մշակվել է Հայաստանի շուկայում գործող առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և ակտիվների կառավարիչների, այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից կայունության սկզբունքներին համապատասխանող գործունեության իրականացմանն աջակցելու համար:

Հայաստանում իրավիճակին համահունչ՝ Ամունդի-Ակբան բոլոր հնարավոր դեպքերում հավատարիմ է կայուն ներդրումների խթանմանը: Մեր նպատակն է դառնալ առաջատար հայաստանյան ներդրող, որը ճանաչված կլիմայի առաջարկվող պրոդուկտների արդյունավետությամբ և թափանցիկությամբ, մասնակիցների հետ հարաբերությունների որակով՝ հիմնված երկարաժամկետ մոտեցման, կազմակերպության արդյունավետության և կայուն ու սոցիալապես պատասխանատու զարգացման հանձնառության վրա:

Ամունդի-Ակբան համոզված է, որ բնապահպանության, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) գործոնների հաշվառումը ֆինանսական շուկաներում ներդրումներ կատարելիս նպաստում է ավելի լավ փորձի ներդրմանը՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կառույցների համար: Այս նպատակն իրագործելու համար Ամունդի-Ակբան հիմնվում է Ամունդիի Պատասխանատու ներդրումներ բիզնես ուղղության վրա, որը փորձագիտական կենտրոն է և տրամադրում է ԲՍԿ վարկանիշների, գնահատման և միավորների հաշվարկման մեթոդաբանություններ, ինչպես նաև որակական վերլուծություն:

Ռեսուրսներ և կառավարում

Ամունդի-Ակբան օգտվում է ինչպես սեփական, այնպես էլ Ամունդի խմբի ռեսուրսներից:

Ամունդի-Ակբայի ռեսուրսներ և կառավարում

Ռեսուրսներ

Ամունդի-Ակբայի գլխավոր գործադիր տնօրենը (CEO), որը գործում է որպես ներդրումային հանձնաժողովի նախագահ, և ֆոնդների կառավարիչները հանձնառություն են ստանձնել հաշվի առնել ԲՍԿ գործոնները ներդրումային գործընթացում, իսկ ռիսկերի կառավարման պատասխանատուն վերահսկում է այս քաղաքականության պահպանումը ներդրումային թիմի կողմից:

¹ Հայաստանի կայուն (հարաուև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզ՝
https://www.cba.am/file_manager/Financial%20stability/Sustainable%20Finance/National_Sustainable_Finance_Roadmap_eng.pdf

	Ամունդի-Ակբայի Պատասխանատու Ներդրումների քաղաքականություն	Էջ՝ 4/9 POL-0018-00
		Ստեղծված՝ 02.02.2024
		Թարմացված՝ Խորհրդի հաստատում՝ 09.02.2024

Կառավարում

ԲՍԿ-ին առնչվող բոլոր հարցերը ներկայացվում են Ամունդի-Ակբայի ներդրումային հանձնաժողովի քննարկմանը: Հանձնաժողովի նիստերը նախագահում է Ամունդի-Ակբայի գլխավոր գործադիր տնօրենը, որոնց մասնակցում են տեղական և արտասահմանյան ներդրումային ու ռիսկերի կառավարման թիմերի բոլոր անդամները: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են եռամսյակային հաճախականությամբ կամ ըստ անհրաժեշտության՝ արտահերթ: Հանձնաժողովը վերահսկում է ԲՍԿ գործունեության հնարավոր ինտեգրումը ներդրումային որոշումների կայացման գործընթացում:

Ամունդի-Ակբայի ռեսուրսներ և կառավարում

Հատուկ բիզնես ուղղություն

Ամունդին իր կառավարման հիմքում ներառել է ԲՍԿ (բնապահպանական, սոցիալական և կառավարման) սկզբունքները և ստեղծել է Պատասխանատու ներդրումների հատուկ բիզնես ուղղություն, որը տրոհվում է հինգ հիմնական թիմերի.

- ԲՍԿ հետազոտություն, ներգրավում և քվեարկություն
- ԲՍԿ մեթոդներ և լուծումներ
- ԲՍԿ բիզնեսի զարգացում և առաջխաղացում
- ԲՍԿ կարգավորող ռազմավարություն
- ԲՍԿ գլխավոր գործառնական տնօրեն

Պատասխանատու ներդրումների բիզնես ուղղությունը փորձագիտական կենտրոն է, որը տրամադրում է ԲՍԿ վարկանիշների, գնահատման և միավորների հաշվարկման մեթոդաբանություններ, ինչպես նաև որակական վերլուծություն: Ընկերությունների և թողարկողների մեծ շրջանակ գնահատվում է Ամունդի սեփական ԲՍԿ վարկանիշավորման մեթոդաբանության հիման վրա, որը նկարագրված է ԲՍԿ վերլուծության բաժնում: Այս բիզնես ուղղությունը նաև ապահովում է հետազոտություն, աջակցություն և գիտելիքների փոխանցում ընկերության ներդրումային կենտրոններին: Թիմի բոլոր անդամները համագործակցում են ներդրումային մասնագետների հետ՝ օգնելու նրանց հնարավորինս ինտեգրել ԲՍԿ գործունեություն իրենց ներդրումային գործընթացներում և փորձագիտության մեջ:

Կառավարում

Ստեղծվել են Պատասխանատու ներդրումների չորս ղեկավար հանձնաժողովներ, որոնք կանոնավոր կերպ վերահսկվում են Ամունդի գլխավոր գործադիր տնօրենի կողմից.

- ԲՍԿ և կլիմայի հարցերով ռազմավարական հանձնաժողով
- ԲՍԿ վարկանիշավորման հանձնաժողով
- Զվեարկության հանձնաժողով
- ԲՍԿ կառավարման հանձնաժողով

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք ծանոթանալ [Ամունդի Պատասխանատու ներդրումների գլոբալ քաղաքականությանը](#):

	Ամունդի-Ակբայի Պատասխանատու Ներդրումների քաղաքականություն	Էջ՝ 5/9 POL-0018-00
		Ստեղծված՝ 02.02.2024
		Թարմացված՝ Խորհրդի հաստատում՝ 09.02.2024

ԲՍԿ վերլուծություն և ինտեգրում

ԲՍԿ վերլուծություն

Ամունդի-Ակբան հենվում է Ամունդիի Պատասխանատու Ներդրումների բիզնես ուղղության կողմից տրամադրվող ռեսուրսների վրա:

Ամունդին մշակել է իր ԲՍԿ վերլուծական շրջանակը և միավորների հաշվարկման մեթոդաբանությունը: Այդ մեթոդաբանությունը սեփական է և կենտրոնացված, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպության ներսում պատասխանատու ներդրումների համար սահմանել ինքնուրույն, անկախ և հետևողական մոտեցում: Երկու հիմնական ԲՍԿ միավորների հաշվարկման մեթոդաբանություն է մշակվել՝ մեկը ցուցակված գործիքներ թողարկող կորպորացիաների համար, մյուսը՝ սուվերեն սուբյեկտների համար: Մոտեցումը հիմնված է համընդհանուր բնույթ ունեցող փաստաթղթերի վրա, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպության Գլոբալ պակտը (UNG), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կորպորատիվ կառավարման սկզբունքները և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) առաջարկությունները:

ԲՍԿ միավորը նպատակ ունի չափելու թողարկողի ԲՍԿ կատարողականը, օրինակ՝ նրա կարողությունը՝ կանխատեսելու և կառավարելու կայունության ռիսկերն ու հնարավորությունները, որոնք բնորոշ են իր ոլորտին և անհատական հանգամանքներին: ԲՍԿ միավորը նաև գնահատում է թողարկողների կառավարման թիմի կարողությունը՝ կարգավորելու նրանց գործունեության հնարավոր բացասական ազդեցությունները կայունության գործոնների վրա:

ԲՍԿ քանակական միավորը վերածվում է տառային վարկանիշի՝ օգտագործելով յոթ միավորանի սանդղակ՝ A-ից մինչև G, որտեղ A-ն ներկայացնում է լավագույն փորձը, իսկ G-ն՝ ամենավատը:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք ծանոթանալ [Ամունդիի Պատասխանատու Ներդրումների գլոբալ քաղաքականությանը](#)։²

ԲՍԿ ներառումը մեր վերլուծության ու ներդրումային գործընթացների մեջ

Ամունդիի սեփական ԲՍԿ վարկանիշը ձևավորվում է Բ, Ս և Կ վարկանիշների և տարբեր աղբյուրներից ստացված վերլուծությունների համախմբման միջոցով և այժմ հասանելի է ավելի քան 18,700 թողարկողների համար:³ Ամունդի ԲՍԿ հետազոտություններով մշակված ԲՍԿ վարկանիշները և դրանց հետ կապված չափանիշները, ինչպես նաև կայունության հետ կապված լրացուցիչ ցուցիչները, հասանելի են մեր բոլոր ֆոնդների կառավարիչներին՝ ներառյալ Ամունդի-Ակբայի ֆոնդների կառավարիչներին, պորտֆելների կառավարման նրանց համակարգում: Սա նրանց հնարավորություն է ընձեռում ներառել կայունության հարցերն իրենց ներդրումային որոշումներում և կիրառել ցանկացած սահմանափակում՝ իրենց պորտֆելներին համապատասխան:

Ամունդի-Ակբան կառավարում է երեք կենսաթոշակային ֆոնդ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ օգտվելով ֆոնդների կառավարման գործունեության հարցում Ամունդիի առաջադեմ գիտելիքներից, փորձից և տեխնիկական աջակցությունից: Յուրաքանչյուր ֆոնդ ունի երկու պորտֆել (տեղական և արտասահմանյան): Արտասահմանյան պորտֆելի կառավարումը պատվիրակված է Ամունդի Փարիզի ՊՆԼՏ թիմին, իսկ տեղական մասը կառավարվում է տեղական ներդրումային թիմի կողմից:

² Ամունդի, Պատասխանատու Ներդրումների գլոբալ քաղաքականություն, <https://about.amundi.com/files/nuxeo/dl/c44a7bb2-813b-4346-96e0-e3d695241d9b>

³ Տվյալները 2023թ. սեպտեմբերի դրությամբ

	Ամունդի-Ակբայի Պատասխանատու Ներդրումների քաղաքականություն	Էջ՝ 6/9 POL-0018-00
		Ստեղծված՝ 02.02.2024
		Թարմացված՝ Խորհրդի հաստատում՝ 09.02.2024

ԲՍԿ սկզբունքների ներառումը տեղական պորտֆելում

Լինելով ներգրավված Ամունդի խմբի ԲՍԿ համակարգում՝ Ամունդի-Ակբան նույնպես ներդրել է ԲՍԿ ինտեգրման ուղղված ռեսուրսներ և մեթոդներ՝ հարմարեցված իր սեփական կառավարմանը:

Ամունդիի ԲՍԿ վերլուծությունները և մշակված վարկանիշները ներդրված են Ամունդի-Ակբայի պորտֆելների կառավարման համակարգերում: Դրանք իրական ժամանակում հասանելի են ֆոնդերի կառավարիչների գործիքակազմում՝ ապահովելով կորպորատիվ և սուվերեն թողարկողների ԲՍԿ վարկանիշների անխափան հասանելիություն՝ ֆինանսական վարկանիշների հետ մեկտեղ:⁴

Տեղական պորտֆելի պարագայում կիրառվում են Ամունդիի սվազագույն չափանիշները և բացառման քաղաքականությունը, ինչի արդյունքում ներդրումային տիրույթից բացառվում են G վարկանիշ ունեցող ընկերությունները:⁵

Այնուամենայնիվ, հայկական ընկերությունների համար Ամունդիի ԲՍԿ տվյալների ծածկույթը համեմատաբար փոքր է՝ պայմանավորված Հայաստանի շուկայի առանձնահատկություններով, որը ԲՍԿ տվյալների բացահայտման առումով ավելի քիչ զարգացած է, քան մյուս շուկաները:

ԲՍԿ սկզբունքների ներառումն արտասահմանյան պորտֆելում

Ամունդի Փարիզի ՊՆԼՏ թիմը, Ամունդի-Ակբայի անունից ընտրում է ֆոնդեր՝ թե՛ Ամունդիի ներքին շրջանակից, թե՛ դրանից դուրս, և առկայության դեպքում նախապատվություն է տալիս բաց և կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված ֆոնդերին (ETF), որոնք խթանում են բնապահպանական և/կամ սոցիալական տարրերը («8-րդ հոդվածի պրոդուկտներ՝ համաձայն SFDR⁶ կանոնակարգի») և որոնք կայուն ներդրումները դիտարկում են որպես իրենց ներդրումային նպատակներ («9-րդ հոդվածի պրոդուկտներ՝ համաձայն SFDR կանոնակարգի»):

Ամունդիի շրջանակներում ընտրված ֆոնդերի համար ԲՍԿ-ն արդեն իսկ ինտեգրված է՝ համաձայն Ամունդիի Պատասխանատու ներդրումների գլոբալ քաղաքականության: Ամունդիից դուրս ընտրված ETF-ների համար նրանց ԲՍԿ հավաստագրերը գնահատվում են՝ հիմնվելով մատակարարի ԲՍԿ մոտեցման վրա: Այն դեպքերում, երբ Ամունդին ընտրում է ակտիվ ֆոնդեր Ամունդիից դուրս, կատարվում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային պատշաճ ուսումնասիրություն: ԲՍԿ հավաստագրերը գնահատվում են վերջինիս շրջանակներում՝ երկու ուղղությամբ: Ամունդին իրականացնում է որակական գնահատում՝ հիմնվելով ակտիվների կառավարչի Պատասխանատու ներդրումների քաղաքականության վրա՝ ներառյալ նրա բացառման քաղաքականությունը, պատասխանատու ներդրումների մոտեցումները (լավագույնը դասում, ԲՍԿ ինտեգրում, ազդեցություն, քվեարկության քաղաքականություն, ներգրավման քաղաքականություն), ինչպես նաև ֆինանսական պրոդուկտի մակարդակով (պիտակներ, SFDR և ԵՄ տաքսոնոմիայի բնութագրեր, Հիմնական բացասական ազդեցություններ, ջերմոցային գազերի արտանետումներ և հաշվետվությունների ներկայացում): Ամունդին նաև կատարում է ԲՍԿ քանակական գնահատում՝ հիմնվելով պորտֆելի ակտիվների վրա՝ օգտագործելով իր սեփական ԲՍԿ մեթոդաբանությունը և միավորները՝ որակական գնահատման հետ համապատասխանությունը գնահատելու համար:

⁴ Ամունդիի ԲՍԿ վարկանիշի կիրառմամբ ներդրումային տիրույթների և թողարկողների համար:

⁵ Ծանոթացեք «Նպատակ և կիրառման շրջանակ» բաժնին: Բացառման քաղաքականության (Ամունդիի Պատասխանատու ներդրումների բացառման քաղաքականություն) կիրառման շրջանակի մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք ծանոթանալ քաղաքականությանը՝ հավելվածի 9-րդ էջում:

⁶ Կայուն ֆինանսավորման բացահայտման կանոնակարգ - <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX%3A32019R2088&from=EN>

	Ամունդի-Ակբայի Պատասխանատու Ներդրումների քաղաքականություն	Էջ՝ 7/9 POL-0018-00
		Ստեղծված՝ 02.02.2024
		Թարմացված՝ Խորհրդի հաստատում՝ 09.02.2024

Նվազագույն չափանիշները և բացառման քաղաքականությունը

Իր ֆիդուցիար պարտավորությունների շրջանակներում Ամունդի-Ակբան կիրառում է Ամունդիի Նվազագույն չափանիշները և բացառման քաղաքականությունը: Ամունդիի սահմանել է Նվազագույն չափանիշներ և բացառման քաղաքականություններ կայունության առանցքային թեմաների վերաբերյալ, որոնք խախտումների բացահայտման դեպքում ապահովում են մշտադիտարկման և վերահասցեագրման հատուկ ընթացակարգեր՝ ենթադրելով ներգրավվածություն, հատուկ քվեարկության գործողություններ (երբ կիրառելի է) կամ բացառում:

Նվազագույն չափանիշների և բացառման քաղաքականությունն ընդգրկում է. **Նորմատիվ բացառումներ**, որոնք կապված են ոչ ավանդական զենքի վերաբերյալ միջազգային կոնվենցիաների և ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի տասը սկզբունքների հետ:⁷

Ոլորտային քաղաքականություններ՝

- **Ջերմային ածուխ՝** Ամունդիի պարտավորվում է մինչև 2030 թվականը ՏՀԶԿ (OECD) և ԵՄ երկրներում, իսկ մինչև 2040 թվականը՝ ոչ ՏՀԶԿ երկրներում, աստիճանաբար դադարեցնել ջերմային ածուխի հետ կապված ներդրումները:
- **Ոչ ավանդական հանածո վառելիք՝** հնարավորության դեպքերում Ամունդիի բացառում է այն ընկերությունները, որոնք ոչ ավանդական նավթի և գազի (ներառյալ թերթաքարային նավթը, թերթաքարային գազը և նավթային ավազները) հայտնաբերման և արդյունահանման հետ կապված եկամուտները գերազանցում են ընդհանուր եկամտի 30 տոկոսը:
- **Ծխախոտ՝** Ամունդիի բացառում է այն ընկերությունները, որոնք արտադրում են ծխախոտային պատրաստի արտադրանք (կիրառման շեմ՝ 5 տոկոսից բարձր եկամուտներ), ներառյալ սիգարետ արտադրողներին, [քանի որ ոչ մի արտադրանք չի կարող համարվել երեխաների աշխատանք չենթադրող]:
- **Միջուկային զենք՝** Ամունդիի սահմանափակում է ներդրումները միջուկային զենք արտադրող ընկերություններում, որոնք ներգրավված են միջուկային զենքի հիմնական կամ հատուկ բաղադրիչների արտադրության մեջ:
- **Պետական պարտատոմսեր՝** Բացառվում են այն երկրների պետական պարտատոմսերը, որոնք ընդգրկված են Եվրոպական Միության (ԵՄ) պատժամիջոցների ցուցակում՝ ակտիվների սառեցման պատժամիջոցով և ունեն պատժամիջոցների ամենաբարձր մակարդակի ինդեքս (հաշվի առնելով ինչպես Միացյալ Նահանգների, այնպես էլ ԵՄ պատժամիջոցները)՝ Ամունդիի ԲՍԿ վարկանիշավորման հանձնաժողովի պաշտոնական վերանայումից և հաստատումից հետո:

Մարդու իրավունքներ

Ամունդիի մարդու իրավունքների քաղաքականությունը կենտրոնանում է կորպորացիաների հետ երկխոսության վրա՝ մարդու իրավունքների պաշտպանության և հարգանքի խթանման ուղղությամբ՝ ապահովելով, որ ընկերությունները ձեռնարկեն անհրաժեշտ քայլեր՝ իրենց գլոբալ գործունեության շրջանակներում մարդու իրավունքներին առնչվող կարևոր ռիսկերը բացահայտելու, խախտումները կանխելու և խնդիրների հայտնաբերման դեպքում արդյունավետ ուղղիչ միջոցներ տրամադրելու կամ դրանց օգտին հանդես գալու համար:

Կենսաբազմազանություն և Էկոհամակարգի հետ կապված ծառայություններ

Ամունդիի նպատակ ունի կարգավորելու կենսաբազմազանության և Էկոհամակարգերի հետ կապված ծառայությունների ռիսկերը՝ խրախուսելով ընկերություններին ընդունել այդպիսի ռիսկերին ենթարկված լինելու փաստը և խնդիրների ի հայտ գալու դեպքում ձեռնարկել կոնկրետ գործողություններ՝ դրանք կանխելու և լուծելու համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք ծանոթանալ [Ամունդիի Պատասխանատու Ներդրումների գլոբալ քաղաքականությանը](https://about.amundi.com/files/nuxeo/dl/c44a7bb2-813b-4346-96e0-e3d695241d9b):⁸

⁷ Միավորված ազգերի կազմակերպության Գլոբալ պայմանագիր (ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագիր). «Հորդոր ընկերություններին՝ համապատասխանեցնել իրենց ռազմավարություններն ու գործունեությունը մարդու իրավունքների, աշխատանքի, բնապահպանության և հակակոռուպցիոն համընդհանուր սկզբունքներին, ինչպես նաև ձեռնարկել գործողություններ, որոնք նպաստում են հասարակական նպատակների առաջընթացը»:

⁸ Ամունդի, Պատասխանատու Ներդրումների գլոբալ քաղաքականություն <https://about.amundi.com/files/nuxeo/dl/c44a7bb2-813b-4346-96e0-e3d695241d9b>
Ամունդի | Պատասխանատու Ներդրումների
գլոբալ քաղաքականություն

	Ամունդի-Ակբայի Պատասխանատու Ներդրումների քաղաքականություն	Էջ՝ 8/9 POL-0018-00
		Ստեղծված՝ 02.02.2024
		Թարմացված՝ Խորհրդի հաստատում՝ 09.02.2024

Ներգրավման քաղաքականություն

Ամունդի-Ակբան ուղղակիորեն չի ներգրավվում ԲՍԿ հարցերում, սակայն օգտվում է Ամունդիի փորձից:

Ամունդիում ներգրավվածությունը (engagement) շարունակական և նպատակային գործընթաց է, որն ուղղված է ընկերությունների գործունեության կամ վարքագծի վրա ազդեցություն գործելուն: Հետևաբար, այն պետք է լինի արդյունքներին միտված, նախաձեռնողական, հաշվի առնի կրկնակի նշանակությունը և ինտեգրված լինի մեր գլոբալ ԲՍԿ գործընթացին:

Ներգրավվածության գործունեությունը ղեկավարվում է Ամունդիի ԲՍԿ հետազոտությունների, ներգրավվածության և քվեարկության հարցերով թիմի կողմից:

Ամունդիի Ներգրավվածության քաղաքականությունը նպատակ ունի.

- Նպաստելու լավագույն փորձի տարածմանը և խթանելու կայունության ավելի լավ ինտեգրումը թիրախային ընկերությունների կառավարման, գործառնությունների և բիզնես մոդելներում:
- Խթանելու դրական շարժն այն հարցերում, թե ինչպես են թիրախային ընկերությունները կառավարում իրենց ազդեցությունը հասարակության և տնտեսության կայունության համար կարևոր հատուկ թեմաների վրա:
- Ուղղորդելու թիրախային ընկերություններին դեպի ավելի կայուն, ներառական և ցածր ածխածնային արտանետումներով բիզնես մոդելի անցման գործընթացում:
- Խրախուսելու թիրախային ընկերություններին՝ մեծացնել իրենց ներդրումները կապիտալ ծախսերում (Capex) և հետազոտությունների ու մշակումների (R&D) մեջ այն ոլորտներում, որոնք խիստ անհրաժեշտ են այդ անցման համար:

Բացի դրանից, Ամունդիի Բիզնեսի քաղաքականությունը լավագույնս օգտագործում է ընկերությունների մասնակի սեփականատերերի պարտականությունները և ընդգծում է հետևյալ կարիքները.

- Պետք է լինի հաշվետու, բազմազան և լավ գործող տնօրենների խորհուրդ:
- Կորպորացիաների կառավարումը և տնօրենների խորհուրդը պետք է ընդունեն բնապահպանական և սոցիալական մարտահրավերները:
- Անհրաժեշտ է ապահովել, որ տնօրենների խորհուրդները և կորպորացիաները համապատասխան կերպ պատրաստված լինեն կայուն, ներառական և ցածր ածխածնային արտանետումներով տնտեսությանն անցնելու համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք ծանոթանալ [Ամունդիի Պատասխանատու Ներդրումների գլոբալ քաղաքականությանը](#)։⁹

Հսկումներ (առկայության դեպքում)	Second level controls of Risk BL on Amundi's exclusion list
---------------------------------------	---

⁹ Ամունդի, Պատասխանատու Ներդրումների գլոբալ քաղաքականություն, <https://about.amundi.com/files/nuxeo/dl/c44a7bb2-813b-4346-96e0-e3d695241d9b>

	Ամունդի-Ակբայի Պատասխանատու Ներդրումների քաղաքականություն	Էջ՝ 9/9 POL-0018-00
		Ստեղծված՝ 02.02.2024
		Թարմացված՝ Խորհրդի հաստատում՝ 09.02.2024

Հրաժարում պատասխանատվությունից՝

Այս Նյութի բացառիկ սեփականության իրավունքները պատկանում են «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Նաև «Ամունդի-Ակբա»):

Նյութը չի կարող վերարտադրվել, փոփոխվել, թարգմանվել, տարածվել կամ այլ կերպ օգտագործվել առանց Ամունդի-Ակբայի Նախնական գրավոր համաձայնության:

Այս փաստաթուղթը նախատեսված է բացառապես տեղեկատվական նպատակների համար և չի ենթադրում և/կամ չի պարունակում Ամունդի-Ակբայի կամ Նրա հետ կապված ընկերությունների ծառայությունների օգտագործման վերաբերյալ որևէ խորհուրդ, առաջարկ կամ հորդոր: Փաստաթուղթը հիմնված է Ամունդի-Ակբայի կողմից հուսալի համարվող աղբյուրների վրա, սակայն դրա բացարձակ ճշգրտությունը կամ ամբողջականությունը երաշխավորված չեն և կարող են փոփոխվել առանց Նախնական ծանուցման: Տեղեկատվությունն անխուսափելիորեն կողմնակալ է, տրամադրվում է որոշակի պահին դիտարկված շուկայական տվյալների հիման վրա և ենթակա է փոփոխությունների:

Այս փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը ներկայացված է՝ առանց հաշվի առնելու կենսաթոշակային ֆոնդի որևէ մասնակցի հատուկ ներդրումային նպատակները, ֆինանսական վիճակը կամ հատուկ կարիքները:

Մինչ կենսաթոշակային ֆոնդին միանալը՝ բոլոր պոտենցիալ մասնակիցները պետք է գնահատեն իրենց ռիսկի հակվածության համապատասխանությունը եկամտաբերության ակնկալիքներին և ուսումնասիրեն յուրաքանչյուր ֆոնդի համար կիրառելի օրենսդրական ակտերը: Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցները ֆոնդ ընտրելիս չպետք է հիմնվեն բացառապես այս փաստաթղթի վրա:

Ամունդի-Ակբան որևէ պատասխանատվություն չի կրում, ներառյալ ուղղակի կամ անուղղակի, որը կարող է առաջանալ այս Նյութում պարունակվող տեղեկատվության օգտագործման արդյունքում: Ամունդի-Ակբան պատասխանատվություն չի կրում մասնակիցների կողմից այս տեղեկատվության հիման վրա կայացված ներդրումային որոշումների համար:

Այս փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը համարվում է ճշգրիտ 2024 թվականի հունվարի դրությամբ: